ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 09.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/46

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Բարսեղյան Եղբայրներ» ՍՊԸ-ի 23.03.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Բարսեղյան Եղբայրներ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Բարսեղյան Եղբայրներ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 23.03.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/22» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգին (այսուհետև՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «Բարսեղյան Եղբայրներ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն)՝ Ընթացակարգի 1-ից 6-րդ չափաբաժինների մասով:

Ընկերության կողմից Ընթացակարգի հրավերի Հավելված 5-ով նախատեսված գնային առաջարկի 4-րդ սյունակում մասնակցի կողմից ՀՀ պետական բյուջե վճարվելիք ավելացված

արժեքի հարկի գումարը նշվել է համապատասխանաբար՝ 1-ին չափաբաժնի համար՝ 2,748, 333 ՀՀ դրամ, 2-րդ չափաբաժնի համար՝ 2,915,000 ՀՀ դրամ, 3-րդ չափաբաժնի համար 2, 483,333 ՀՀ դրամ, 4-րդ չափաբաժնի համար՝ 81,667 ՀՀ դրամ, 5-րդ չափաբաժնի համար՝ 465,000 ՀՀ դրամ, և 6-րդ չափաբաժնի համար՝ 531,667 ՀՀ դրամ: Ընդ որում, 1-ին, 3-րդ, 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ավելացված արժեքի հարկի գումարի մեջ Ընկերության կողմից չի նշվել ամբողջ թվին հաջորդող՝ 0,040 դրամ գումարը (40 լումա):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) 20.03.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 3.2 կետով որոշել է մերժել Ընկերության հայտը այն հիմնավորմամբ, որ «Բարսեղյան Եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 1-ին, 3-րդ, 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ավելացված արժեքի հարկի հաշվարկը ներկայացված է ոչ ճշգրիտ:

Բողոքի իրավական հիմքերը և ապացույցները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց նույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և

(կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

ՀՀ հարկային օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկային հաշվարկներում, ինչպես նաև հարկային մարմնի կողմից կազմվող և հարկ վճարողին տրվող ծանուցագրերում, տեղեկանքներում, արձանագրություններում, ստուգման ակտերում և այլ փաստաթղթերում հարկ վճարողի հարկային պարտավորությունների գումարների, դեբետային գումարների և փոխհատուցման ենթակա գումարների հաշվառման համար, որպես չափման միավոր, ընդունվում է դրամը (լումաներն անտեսվում են):

Վերոգրյալից հետևում է, որ «Բարսեղյան Եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի 1-ին, 3-րդ, 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ավելացված արժեքի հարկի գումարը չէր կարող պարունակել լումաների հաշվարկ, ուստի Ընկերության հայտը մերժելով Հանձնաժողովը խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով և ՀՀ հարկային օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջները»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «Բարսեղյան Եղբայրներ» ՍՊԸ-ն բողոքով խնդրել է.

1.Դադարեցնել «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/22» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 20.03.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 3.2 կետով կայացված՝ «Բարսեղյան Եղբայրներ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

2.Պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/22» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել մրցույթի 1-ին, 3-րդ, 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով «Բարսեղյան Եղբայրներ» ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին համապատասխան որոշում:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Ընկերության տնօրեն Արկադի Բարսեղյանը:

2. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «Բարսեղյան Եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից 23.03.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքի վերաբերյալ 28.03.2018թ. թիվ 02/61-21802h գրությամբ հայտնել է հետևյալը.

««Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատում ու համեմատումն իրականացվում են առանց նույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Գնահատող հանձնաժողովը մերժելով «Բարսեղյան Եղբայրներ» ՍՊԸ-ի հայտը 1-ին, 3-րդ, 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով, հիմք է ընդունել այն հանգամանքը, որ վերջինիս կողմից ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկը ներկայացվել էր ոչ լիարժեք՝ առանց ամբողջական գումարներին հաջորդող 40 լումաները նշելու, իսկ գնային առաջարկը գնահատելիս հիմք է ընդունվում այն սկզբունքը, որ արժեքի (ինքնարժեք և կանխատեսվող շահույթի հանրագումարը) գումարին գումարած ավելացված արժեքի հարկի գումարը պետք է հավասար լինի ընդհանուր թվին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացնելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Հաշվի առնելով, որ թե գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, և թե հրավրով նախատեսված չէ գնային առաջարկի կլորացման դրույթ կամ հնարավորություն, անկախ այն հանգամանքից, թե իրականացվել է լումաների կամ դրամի կլորացում, գնահատող

հանձնաժողովը գնային առաջարկը գնահատել է սխալ, որի պարագայում հայտը ենթակա էր մերժման»:

Խորհրդի նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Վաչագան Մեժունցը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/46 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է «Բարսեղյան Եղբայրներ» ՍՊԸ-ի 23.03.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/22» ծածկագրով բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավերներ), «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/22» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 20.03.2018թ. հայտերի բացման նիստերի N 2 արձանագրությունը, «Բարսեղյան Եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի պատճենը, Պատվիրատուի 28.03.2018թ. թիվ 02/61-21802h գրությամբ հայտնած դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/22» ծածկագրով բաց մրցույթի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «Բարսեղյան Եղբայրներ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն)՝ Ընթացակարգի 1-ից 6-րդ չափաբաժինների մասով:

Հանձնաժողովի 20.03.2018թ. հայտերի բացման նիստի N 2 արձանագրության 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված գնային առաջարկները (ԱԱՀ-ն ներառյալ) կազմել են համապատասխանաբար՝ 1-ին չափաբաժնի համար՝ 16,490,000 ՀՀ դրամ, 3-րդ չափաբաժնի համար 14,9000,000 ՀՀ դրամ, 4-րդ չափաբաժնի համար՝ 490,000 ՀՀ դրամ և 6-րդ չափաբաժնի համար՝ 3,190,000 ՀՀ դրամ:

Նույն կետի 3.2 ենթակետով Հանձնաժողովն արձանագրել է, որ «Բարսեղյան Եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 1-ին, 3-րդ, 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ավելացված արժեքի հարկի հաշվարկը ներկայացված է ոչ ճշգրիտ, ուստի, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի 41-րդ կետի

պահանջները՝ Հանձնաժողովը որոշում է մերժել «Բարսեղյան Եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

«Բարսեղյան Եղբայրներ» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը գնային առաջարկով առանձնացված տողով նախատեսել է Հայաստանի Հանրապետության ՀՀ պետական բյուջե ավելացված արժեքի հարկի գծով վճարվելիք գումարը, ընդ որում, Ընթացակարգի մյուս մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների համեմատ վերջինիս գնային առաջարկները նշված չափաբաժինների մասով եղել են նվազագույնը: Պատճառաբանելով, որ Ընթացակարգի 1-ին, 3-րդ, 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկում Հայաստանի Հանրապետության ՀՀ պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի մեջ չի նշվել ամբողջ թվին հաջորդող 0,040 դրամ գումարը (40 լումա)՝ Հանձնաժողովը որոշել է Ընկերության հայտը գնահատել անբավարար: Ընկերությունը հայտնել է նաև, որ գտնում է, որ Պատվիրատուն Ընկերության հայտը մերժելով՝ գործել է ոչ իրավաչափ, քանի որ վերջինիս գնային առաջարկի 1-ին, 3-րդ, 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ավելացված արժեքի հարկի գումարը չէր կարող պարունակել լումաների հաշվարկ, ինչն ամրագրված է ՀՀ հարկային օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին մասով:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները և իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:
- 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:
- 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց նույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ)՝

• 32-րդ կետի 1-ին մասի «գ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է գնային առաջարկ.

• 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը.

• 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/22» ծածկագրով բաց մրցույթի հրավերի 1-ին մասի՝

• 5.2 կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

• 8.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 14-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հարկի հաշվարկը կատարվում է հայկական դրամով:

Օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկային հաշվարկներում, ինչպես նաև հարկային մարմնի կողմից կազմվող և հարկ վճարողին տրվող ծանուցագրերում, տեղեկանքներում, արձանագրություններում, ստուգման ակտերում և այլ փաստաթղթերում հարկ վճարողի հարկային պարտավորությունների գումարների, դեբետային գումարների և փոխհատուցման ենթակա գումարների հաշվառման համար, որպես չափման միավոր, ընդունվում է դրամը (լումաներն անտեսվում են):

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Բարսեղյան Եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից 1-ին, 3-րդ, 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ներկայացված գնային առաջարկներում ավելացված արժեքի հարկի բաղադրիչի հաշվարկը կատարվել է դրամով (լումաները անտեսվել են), ընդ որում, Ընթացակարգի շրջանակներում վերջինիս գնային առաջարկները նշված չափաբաժինների մասով եղել են նվազագույնը:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը այն հիմնավորմամբ, որ «Բարսեղյան Եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից 1-ին, 3-րդ, 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ավելացված արժեքի հարկի հաշվարկը ներկայացվել է՝ որպես չափման միավոր ընդունելով դրամը:

Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ «Բարսեղյան Եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը մերժելով՝ գործել է ոչ իրավաչափ, խախտելով ՀՀ հարկային օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին մասով, Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով, ինչպես նաև Հրավերի 8.2 կետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» և «գ» ենթակետերով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Բարսեղյան Եղբայրներ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 23.03.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Դադարեցնել «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/22» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 20.03.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 3.2 կետով կայացված՝ «Բարսեղյան Եղբայրներ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

3. Պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/22» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ ընդունել մրցույթի 1-ին, 3-րդ, 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով «Բարսեղյան Եղբայրներ» ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**